



ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ՉՐՈՅՑՆ ԽԱՌՍՄԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՀԾԸ.» ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ Ա. ՄԱՍ—ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐՎԱԳԻՇ ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ
ԿՑԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Մովսես Երզնկացին եղել է իր ժամանակի ամենազարգացած, հեղինակավոր և պատկառազդու հոգևորականներից մեկը:

Մեզ հայել է Մովսես Երզնկացու մասին մի վարք, ըստ Հ. Քյուրոյանի, գրված իր աշակերտ Գրիգորիս Երզնկացու (Կամ Խարբերդցու) կողմից¹: Այն տպված է Ալիշանի «Հպապատում» գործի մեջ, Վեճետիկ, 1901, էջ 507—509: Մովսես վարքը պահպան բնույթ ունի:

Վարքից հայտնի է, որ նա ազնվատոհմ ընտանիքի զավակ է, ծնվել է 1250-ական թվականներին, Երզնկայի մոտ գտնվող Կամախ-Անի բնակվայրում, Ներսես անունով մի քահանայի ընտանիքում: Մանուկ հասակից ուսանել է Երզնկայի Ավագ վաճառում, որ և ընդունել է Կուսակրոն քահանայուրյան կարգ:

1298 թվականին Երզնկացին «յորդորեալ առանձ յիմաստուն բարունապետէն Յովհաննու» (տես մեր հոդվածը Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության մասին, «Էջմիածն», 1973 թ., № Թ, էջ 17), Երզնկացու գրում է մի հետաքրքիր և կարեւոր աշխատություն՝ «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն»:

Այնուհետև Երզնկացին ճանապարհորդել է Արևելյան Հայաստանում և Կիլիկիայում:

Կիլիկիայում նա աշակերտել է ժամանա-

կի Աշամավոր վարդապետ Գևորգ Ակնուցուն (+1301 թ.), որը որոշ ձեռագրերում կոչվում է նաև Լամբրոնացի: Պահպանվել է Մովսես Երզնկացու ճառը² իր ոսուցիչ Գևորգ Ակնուցու մահվան առթիվ, 1301 թ. հունվարի 11-ին, որը վկայում է, որ այդ թվականին Մովսես Երզնկացին Կիլիկիայում է եղել:

Այս հաստատում է նաև Նոր Զուղայի Ամենափրկիչ վամքի Մատենադարանի № 202 ձեռագրի հիշատակարաններից մեկը (էջ 326թ.).

...Ազքանազեանըս զբրոհի
Թուաքերութեանս համարի
Ներմիարիդ ընդ յիսմենի (1301)
Զքրա եղև այս տափ,
Ի գաւառու Կիլիկիի,
Հուա առ դղենիս հոչակելի,
Որ և անուամբ Բարձր կոչի:

Մովսես մեղաք մեռեալս ոգի,
Որ սպասաւոր գոլով Բանի,
Ստացադ եղէ այս մատենի
Յարդեանց այլոց ձրից պարգևի...³

Կիլիկիայում եղած տարիներին նա արտագրել է մի Աստվածաշունչ⁴, որը մեծ արժեք է ներկայացնում Աստվածաշունչի բնագրային ուսումնահրության և հայ ձեռագրահիտության համար:

Թե ե՞րբ է Մովսես Երզնկացին վերա-

² Հ. Դ. Ալիշան, Հայապատում, Վեճետիկ, 1901, էջ 504—507:

³ Լ. Ս. Խաչիկան, ԺԴ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 8:

⁴ Տես Երևանի Ս. Մ. անվան Մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարանի) № 177 ձեռագիրը:

¹ Հ. Քյուրոյան, Երիզա և Եկեղեց գավառ, Վեճետիկ, 1958, էջ 280, 282—286:

դարձել Կիլիկիայից, ճշգրիտ տվյալների թագակառության պատճառով դժվար է ճշշտել: Սակայն կան վկազմություններ, որոնք վերադարձի թվականը մոտավորապես դընու են մինչև 1307 թվականը:

Այսպես, մեզ է հասել հետևյալ հիշատակարանը.

«Եկանելեղոյն Սղամայ ի դրախտէն մինչ ի յասրտումն գրոց էր թի ժամանակին .807. (6504), զի լեռնեղոյն Սղամայ մինչ ի Քրիստո էր .ՌԾՂ. (5198), և ի ծընդդեմն էն Քրիստո ու ՌԾՁ. (1816) առ, իսկ թվ. Մեծ Հայոց էր .ԶԿԳ. (1814):

Ես Գրիգորիս (Խարքերդցի) մայրական գրիօր եկեալ ի գաւառն Եկեղեց և անը մետավ ի մեծամիջուկ վանքն Տիրաշէն, և անդ ուսեալ, որպէս ասացի, և կրօնաւրեալ, իսկ յատոյ ի գալ Վարդապետին Մովսիսի ի Կիլիկիոյ բազում գրենօք, յորդորեալ և առեալ զմեզ, բնակեցաք ի Դարանալեց գաւառն՝ ի լեռն սուրբ և մեծ Լուսաւորչին ամս վեց...» (Ընդգումը մերև է—Ե. Ա. Պ.):

Այս Գրիգորիս Խարքերդցին ձեռագրի ստացողն է: Կա նաև գրիչ՝ Միմիթար Երգնելկացու հիշատակարանը, որը պարզվում է, որ ձեռագիրը գրվել է 1314 թվականին, Գլաձորում, «առ ոսու մեծ վարդապետին Եսայեալ»⁵:

1814 թվականից վեց տարի առաջ 1808 թվականն է: Առնվազն մեկ տարի ել պետք էր, որպեսզի Գրիգոր Խարքերդցին բաժանվեր իր ուսուցից, գնար-հասներ Գլաձոր, այնուղեք երևելի դեմք դառնար, որպեսզի ձեռագիր պատվիրեր և ստանար:

Այսախուս, Մովսես Երգնելկացին Կիլիկիայից Դարանայաց գալաք է եկել մինչև 1307 թվականը «քազում գրենօք» և սուրբ Լուսավորչի վանքում գրադվել ուսուցչությամբ:

Սույն Գրիգոր Լուսավորչի անապատում Մովսես Երգնելկացին կառուցում է սուրբ Աստվածածին եկեղեցին, 1811 թվականին: Այս է հաստատում Երևանի Մատենադարանի № 5077 ձեռագրի հիշատակարանը (էջ 288r).

«...Արդ եղև աւարտ գրչութեան սորա ի թվ(աւելին) հայոց .ԶԿ. (1811), յանապատեր սրբոյն Գրիգորի, ոնդ հովանեան սրբ Կարապետին և սրբոյն Մինասա և նորաշէն սուրբ Աստվածածին՝ որ յայս ամի բազում ջանի և աշխատութեամբ շինեալ եղև ի գերահոչակ բարունապետէն

⁵ Հ. Պ. Ալիշան, Հայապատում, էջ 525, և Սիսական, Վեճետիկ, 1898, էջ 185:

⁶ Ամբ:

Մովսիս...»⁷: (Ընդգումը մերև է—Ե. Ա. Պ.):

1807 թվականի մարտի 19-ին Հեթուն թագավորակոր ձեռնարկով և հայազգանությամբ Սփի և Սովոր տաճարում գոմարվում է մի ժողով, ընդունելու համար Գրիգոր է Անալիպեցի կաթողիկոսի (աղեն վահանական) նորամուծությունները հայ եկեղեցու մեջ:

Ժողովին մասնակցում են հիմնականուն կիլիկիան եպիսկոպոսներն ու վարդապետները և լատինասեր իշխանները:

Ժողովը տևում է մեկ օր և ընդունում Անալիպեցու նորամուծությունները, Հեթունի գինակորական ճշշման տակ:

Ահա այս ժողովի որոշումների դեմ գրով ու խոսքով պարզաբ մի ճակատ է բացում Մովսես Երգնելկացին, իրու գլուխ արևելյան վարդապետների սրբամոյան հատվածի:

Այս մասին հանգամանքորեն մենք կանդրադառնանք հաջորդ էջերում:

Երգնելկացու կյանքի և գործունեության մասին որիշ ոչինչ հայտնի չէ մեզ:

Հիշվում է միայն նրա մահվան թվականը՝ 1323 թ., որը ընդունված է բանահրության կողմից:

ՀԱՅՄԱՐՈՏ ԱԿՆԱՐԿ ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ

Բազմարդյուն և բազմաժանր է Մովսես Երգնելկացու մատենագրական վաստակը:

Այն բաղկացած է մեկնողական, դավանարականական, իրատական-կանոնական, չափածո և այլ բնույթի գործերից:

* *

Ա. Մ ե կ ն ո ն ա կ ա ն գ ո ր ծ ե ր

ա.— «Մեկնողին ժամակարգութեան»:
Տաված է երկու անգամ, Կոստանդնուպոլսում 1837 և 1840 թվականներին:

1840 թվականի տպագրությունը ունի հետևյալ խորագիրը. «Մեկնողին ժամակարգութեան, արարեալ երանելույն Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսի և կարգադրեալ Մովսիսի գիտնական վարդապետի»:

Իրապես է, Մովսես Երգնելկացու ժամակարգության մեկնողությունը Խոսրով Անձնացու մեկնության խմբագրությունն է, որոց հավելումներով Հովհան Օձնեցու, Սուեփանու Սյունեցու (Ը դար) և Մովսես Գերթողակոր գործերից:

Նույն տպագրության մեջ կա մի փոքրիկ հատված՝ «Յառաջաբանութիւն Մովսէսի երջանիկ վարդապետի» սուրբ գործոյն հա-

⁷ Լ. Ս. Խաչիկյան, Առվարձ, էջ 79:

արողի» (էջ դ—ե), որտեղ Մովսես Երգոնկացին հետևալ խոսքերով բացատրում է իր աշխատանքի նպատակը և դրապատճառը.

«...Եւ յայս ամենայնէ թափոր իմ գոլով բայց բանզի խնդրեցեր սիրելի՝ ըզվերլուծութիւն աղօթից, զորս թողեալ է մեզ երանելուցն Խոսրովու, ոչ բաւական համարելով զարարեալն, կապեցեր զմեզ ընդհարկա՝ գրաւելով ի ծառայութիւն....

Բայց սկսուր ի սկիզբն գրոցս զորս սկզբնաւորեալ է մեծին Խոսրովու, հաւաքելով յանձն իր տեղիս ըստ պատշաճ պիտոյից և զիրաքանչիր սրբոցն խօսեցեալ բան:

Այլ ահա հնագանդեալ հրամանաց քոց բարեւէր և պատուելի եղբայր Թէղոդրու.... սկիզբն արացուր Աստուծով ի գործս»⁸:

բ.—«Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջադոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն»:

Մովսես Երգոնկացին սույն աշխատությունը գրել է Երգոնկացու, 1293 թվականին, իր ուսուցիչ Հովհաննես Երգոնկացու հրահանգով:

Աշխատությունը առայժմ անտիպ է:

Մենք պատրաստել ենք աշխատության բնագիր ըստ մեզ հասած ամենահին ձեռագրի՝ Մատենադարանի № 9292-ի, և ներկայացրել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչությանը, իբրև դիպումային աշխատանք:

Մովսես Երգոնկացու Պատարագի մեկնության հեղինակի վավերականության, գրության թվականի, վայրի, դրդապատճառների, բովանդակության, աղբյուրների և արժեքի մասին տես մեր երկու հոդվածները՝ «Էջմիածն», 1973 թ., № Թ. 14—20 և № Ժ. 43—48:

Այստեղ կարելի է հիշատակել և այն, որ Հ. Քյուրտյանը փաստերի աղավաղումով շփոթել է Մովսես Երգոնկացու ժամանակագության և Պատարագի մեկնությունները՝ մի գործ համարելով դրանք, և ընկեր անելանելի առեղծվածի մեջ⁹:

*

*

*

բ.—Դավանաբար արքան գործ եր

Մովսես Երգոնկացու մատենագրական վաստակի ամենակարևոր մասը նրա դավանաբանական գործերն են, որ նա հանդիս է գալիս իրեն ջերմ պաշտպան հայ ե-

⁸ Մեկնութիւն ժամանակագութեան Արարեալ Երանելով Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսի և կարգադրեալն Մովսեսի գիտմական վարդապետի, ՅՈՐԵԱԳԻՒ (Կ. Պոլիս), 1840, էջ ե:

⁹ Հ. Քյուրտյան, նույնը, էջ 260—261:

կեղեցու դավանության, ծխակարգի, սովորությունների, սրբությունների, որի համար էլ արժանիորեն կոչվել է «Հայոց վարդապետ», «գերահիշակ րարունապետ»:

ա.—ՌԱԿԵՎՈՐԻՑԻ

Դավանաբանական հյութերի շատ հարուստ մի ժողովածու է:

Ըստ մատենագրական տվյալների, Երգոնկացին սույն ժողովածուն կազմել է 1310-ական թվականներին:

Երևանի Մ. Մ. անվան Մատենադարանի № 576 ձեռագրում, որը Մովսես Երգոնկացու ՌԱԿԵՎՈՐԻՑԻ է, պահպանվել է Երգոնկացու հիշատակարանը, որի վերջում ասված է. «Եւ արդ ես վերջին մովսես, ծնունդ լտին ժամանակի և սպասաւոր պիտակ բանին, ծողովաւալ հաւաքեցի սակա ինչ ի բանից սրբոց և եղի ի տաս այս վասն քերման ժամանակի և շփոթման ճշմարտութեան ի բազմաց խուճապելոյ: Եւ եղև զրաւ գրչութեան այս մատենի ի մէջ մայրաքաղաքին Ե(ր)զնկու, առ այսուակալութիւնս տեառն Սարգսի արքեպիսկոպոսի ընդհ հովանեան սուրբ կաթողիկէիս և սուրբ Կարապետիս և նշանարհաց սուրբ Ներսէսիս»¹⁰:

բ.—«Մովսեսի Հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց»

Սույն գործը մեզ է հասել տասնյակ օրինակներով¹¹: Թղթի գրության հախադրյալների, դրդապատճառների և արդյունքների մասին շատ քիչ բան է հայտնի մեզ:

Վերնագրից պարզվում է միայն, որ Մովսես Երգոնկացին սույն թուղթը գրել է Տրապիզոնի հունադպավան Գրիգոր քահանայի՝ Հայ եկեղեցու մասին արված ամբաստանագիր-թղթին ի պատասխան:

Մովսես Երգոնկացու սույն գործը արժեքավոր է իր շոշափած թեմաների բազմազանությամբ և դրանց խոր վերլուծությամբ:

Թուղթը գրվել է 1309 թվականից առաջ:

գ.—Վասն պատկերացն

Մովսես Երգոնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի» գործի մեջ կա հետևյալ վկայությունը. «Այ և վասն պատկերացն դարձեալ զոր յիշեալ եք, գրեալ եմք և զայս ընդհ երկար բանի յայլում տեղուց»:

Այս վկայությունը մեզ է հուշում, որ Երգոնկացին մի գործ է գրել պատկերահարգության մասին, որը սակայն մեզ չի հասել:

դ.—ԸՆԴՀԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ Սակս ջրոյն խառնան ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց ՀՅԸ.

¹⁰ Տես ձև. № 576, էջ 164ր:

¹¹ Տես Մատենադարանի №№ 2174, 2678 և այլ ձեռագրերը:

Գ.—Խ Ր Ա Տ Ա Կ Ա Շ - Կ Ա Շ Ո Շ Ա Կ Ա Շ
ա. «Մովսէսի վարդապետի ասացեալ ի
խնդրո Յակոբ»:

Այս գործը մեզ է հասել միայն մեկ ձեռագրով, որը Երևանի № 108 ձեռագիրն է (էջ 259թ—26), գրված 1322 թվականին Երուաղեմուն, Մովսէս Երգմկացու գործերի գրիշ Թորոս Տաղումացու ձեռքով: Ձեռագրի ստուգով նույն Հակոբոս Արևելցին է, որի խնդրանքով գրել է Երգմկացին այս գործը:

Սույն գործը մեզ ծանոթ է նաև «Մովսէսի Երգմկացոյ Դաւանութիւն Բարատոյ»¹² անունով: Սակայն Բարատոյի դրագանության մասին միայն մեկ տող կամ առաջին տողը. «Հարատոյ Դաւանութիւնն ծանալութիւնն է առ Աստուած»¹³: Այնունեան ողջ գործում խոսվում է կրոնավորի վարքի, գործունեության մասին, խրատական բնույթով: Եվ այս անցումը կատարվում է հետևյալ նախարարությամբ. «Բայց Բարատոյն՝ գործ պիտոյ է, զի Բարատ առանց գործոց ունայէ է»¹⁴:

բ.—Խրատ կանոնականք ի Մովսէսի վարդապետէ Երգմկացոյ ասացեալ և գրեալ և առաքեալ լեկենեցեաց Հայաստանեաց:

Սույն գործը մեզ հասել է տասնյակ օրինակներով¹⁵, միմնականում այն դրված է Մովսէս Երգմկացու հանրահայտ «Ուկեփորիկ» ժողովածուում, իբրև առաջարան:

Գործը սկսվում է հետևյալ բառերով. «Ի դամբարանէ սրբոյ լուսաւորչիս և ի վարդապետէս Մովսէս—որ և զմիօք են վարդապետը և եղբայրք....»¹⁶, որը և վկայում է, որ Երգմկացին այս խրատականը գրել է Կիլիկիայից վերադառնալու հետո:

Խրատականում միմնականում խոսվում է աշխարհիկ մարդկանց վարք ու բարքի, եկեղեցու և ծիսակատարությունների մկանամբ նրանց պարտականությունների մասին:

Դ.—Ռ Պ Ր

«Երուատ բանի սույ ինչ պատմագրաբար լերշանիկ բարենապետն և ի քաղցրաբարբար վարդապետն Գևորգ Լամբրոնացի,

¹² Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Ա. Մ. Ա. Մատենադարանի, Երևան, 1985, Ա. Բատոր, էջ 251:

¹³ Տե՛ս ձեֆ. № 108, էջ 259թ:

¹⁴ Անդ:

¹⁵ Մատենադարանի ձեռ. №№ 5849 (էջ 1ա—6թ), 10286 (Ցուցակ):

¹⁶ Ձեռ. № 5849, էջ 1ա:

ասացեալ Մովսէսի վարդապետի՝ աշակերտի նորին:

Ողբ, գրված իր ուսուցիչ Գևորգ Ակլուսոց մասնակի առջիվ, 1301 թվականի հունվարի 11-ին:

Երգմկացին նախ ողբում է իր ուսուցիչ մահը, ապա տապիս Գևորգ Ակլուսոց վարքը, այնուհետև գովքում է անում իր ուսուցիչ և վերջում նորից ողբում նրա մահը:

Սույն ողբը տպակած է Ալիշանի «Հայապատում»-ում, էջ 504—507:

Ե.—Զ Ա Շ Ա Գ Ա Շ Ա Բ

ա. «Վասն թագաւորացն Հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»:

Հայ և պարսիկ թագավորների ցանկն է, ըստ Մովսէս Խորենացու:

Վերջում կա մի փոքրիկ հավելված՝ հայ բագրատունի և կիլիկիան թագավորների անուններով:

Գործը անոնիս է և մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով, ինչպես օրինակ. Մատենադարանի №№ 6938 (էջ 129ա—130թ), 2678 (էջ 137ա—138ա), 1868 (էջ 210թ—215թ) և այլն:

բ.—Տաղ՝ «Մարգարէից սա սերմանուն»:

Բազմաթիվ ձեռագրերում Մովսէս Երգմկացու գործերին կցված է մի տաղ՝ Մարգարէից սա սերմանուն, որի տների առաջին տառերը հոդում են՝ Մովսէսի է սա համադասությունը:

Սույն տաղը տպակած է Նորայր եպս. Պողարյանի Երուաղեմի ձեռագրացուցակի գ հատորում, էջ 227—228:

«Ըստ Ռուսական պատմություն ՍԱԿՍ ԶՐՈՅՆ ԽԱՌԵՄՍԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ԹՈՒԻՒՆ ՀԱՅՈՑ ՀԾԾԸ.» ԹՈՒՂԹԸ

Մովսէս Երգմկացու սույն թուղթը բացառիկ արժեք է Աերկայացնում հայ դավանաբանական գրականության մեջ իր շոշափած թեմայով:

Դավանաբանական վիճաբնությունների ամենակարևոր հարցի՝ Քրիստոսի երկու բնույթունների մասին հարուստ գրականություն է հասել մեզ:

Ամեն անգամ, եթե խոսք էր լինում եկեղեցիների միության մասին, Քրիստոսի տառերը եկեղեցիների կողմից հայ եկեղեցու առջև միշտ դրվում էր Քրիստոսի երկու բնույթունների ընդունման հարցը, իբրև ամենահիմնական կետ:

ԺԳ դարի կեսերից սկսած, հայ-հոգունեական եկեղեցական հարաբերությունների ժամանակ, քննությունների հարցը իր տեղը զիշում է մեկ այլ կարևոր հարցի՝ պատարագի բաժակի մեջ գիտու հետ չուր խառնելուն:

Սա մի խորամանկ քայլ էր արևմտյան եկեղեցու կողմից մոտածված:

Հոռոմ արդեն զգացել էր, որ հայ եկեղեցու հետ միության մասին խոսել, նրան առաջարկելով ընդունել երկու քննության դավանանքը, անհնար էր: Եվ Հոռոմ փոխում է դավանաբանության ամենաէական հարցի ողղությունը՝ քննությունների հարցից անցնելով բաժակի մեջ չուր խառնելուն:

Սակայն այս արտաքին կողմն էր միայն:

Բաժակի մեջ չուր խառնելու հարցը Հոռոմ այսպես էր ներկայացնում հայ եկեղեցուն, որի ընդունումը միանգամայն և ընդունումն էր երկու քննության վարդապետության:

Արժե այստեղ հիշել Հոռոմի փաստարկներից մեկը՝ բաժակի մեջ չուր խառնելու կապակցությամբ.

«...Սուրբն Երինոս՝ աշակերտ առաքելոց, գրեալ է... զի ոմն մարդ լոկ և ոմն Աստուած սուկ անուանեն զՔրիստո: Երինեանքն մարդ սրբացեալ ասեն զՔրիստո և ոչ Աստուած և մարդ և յայն սակա ջրով միայն պատարագէին: Են մարկինեանքն Աստուած միայն սաէին և ոչ մարդ և Աստուած և յերկու միացեալ և վասն այր գիտով միայն սրբարագէին»¹⁷:

Դժբախտաբար, բաղաբական նկատառություն, Հոռոմի այս և նման դավանաբանական վարդապետությունների նկատմամբ հարգալիք և ստրկաբար ընդունելու ձգտություն են ցուց տալիս կիլիկյան հայկական պետության ինկավար, ֆրանսիկյան միաբանության անդամ Հեթում կրոնավորը, հայոց կաթողիկոս Գրիգոր է Անավարդեցին (1293—1307), կիլիկյան լատինակեր կուսակցությունը:

Նրանց ազգավճառ և անհայեցողական գործողությունները հասնում են այնուեղ, որ որշում են 1305—1306 թվականներին ժողով գումարել Սուտ և պաշտոնապես ընդունել Հոռոմի առաջարկները:

Բարեկախտաբար բաղաբական խառնակ վիճակի պատճառով հետաձգվում է ժողովի գումարում, և 1307 թվականին (հայկանաբար հունվարի վերջերին) մահանում է Գրիգոր է Անավարդեցի կաթողիկոսը:

Սակայն Անավարդեցու մահը չի խանգարում ժողովի գումարմանը, որը տեղի է ունենում նույն տարին, մարտի 19-ին, Հեթում

թագավորանոր նախագահությամբ և կիլիկյան եպիսկոպոսներից ու վարդապետներից ունաց մասնակցությամբ: Ժողովին ներկա են լինում նաև բազմաթիվ լատինակեր հայ իշխաններ:

Ժողովը տևում է մեկ օր և ընդունում Հոռոմի առաջարկները և Անավարդեցու նորամուծությունները, անշուշտ Հեթումի կողմից գործադրված բաղաբական ճնշման ներքո: Այլապես ինչպես կարելի է դավանաբանական և ծիսական կարևոր համակարգություններուն ունեցող տասնյակ հարցեր քննել մեկ օրուն:

Այս ժողովի մասին պատմիչ Կղեմես Գալանու վկայում է հետևյալը. «Առաջի եղանակ է արքայի զնամակ կաթողիկոսի, որպէսզի քննեացի ճշմարտութեամբ»¹⁸:

Անշուշտ այսպիսի մի ժողովի որոշումները երբեք չեն կարող անդրադառնալ հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքների փոփոխման վրա, ժողով, առանց հայոց կաթողիկոսի, առանց ամենակարևոր դավանաբան եպիսկոպոսների և վարդապետների մասնակցության ու բաղաբական-զինվորական ճնշման տակ:

Ահա այս ժողովի որոշումների դեմ է, որ ընդունացել է Մովսես Երգելկացին, արեւիլյան վարդապետների անունից, գրելով «Ընդդիմադրութիւն սակա ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .ԶԾԸ.» համաձայնությունը:

Եվ քանի որ ժողովի որոշումները նույն Գրիգոր Անավարդեցու դավանաբանական համական է՝ ուղիւած Հեթումին, որտեղ հայտնում է հայ եկեղեցուն իր կառաքելիք նորամուծությունների մասին¹⁹, ուստի Մովսես Երգելկացին իր հականապության մեջ խոսելով Սոի անօրինական ժողովի դեմ, հականառում է նաև Գրիգոր Անավարդեցուն, նրա համակին:

* * *

Մովսես Երգելկացու «Ընդդիմադրութիւն Սակա ջրոյն խառնման...» թուղթը բաղկացած է չորս մասից.

ա.—Գրիգոր կաթողիկոսի հայոց ջրողի, երկարնակի, ուրացողի, ոի որոց թողեալ զուսումն մանկութեան և մոռացեալ զուսուն աստուածեղէն. (Տես Մատենադարանի ձեռ. № 2268, էջ 74թ—77թ):

բ.ն.—Վասն ջրոյն թէ սարտ է խառնել ի սուրբ խորհուրդն, որպէս և այլ բրիստու-

¹⁷ Ան Մատենադարանի ձեռ. № 2268, էջ 75ա:

¹⁸ Կղեմես Գալանու, Միաբանութիւն Հայոց սուրբ կելտեցուն ընդ մեծի սուրբ եկեղեցուն Հոռոմ, նաև Ա. Հոռոմ, 1650—1661, էջ 461:

¹⁹ Ան, էջ 439—450:

եալը... Եւ որ գրեացն զայստիկ ի ժամ վախճանին, զղացեալ ասէք. «Հայ եմ, հայ եմ և հայ մեռանին»: Այս մինչև ցայս վայր:

բ.—Ընդդիմադրութիւն ասկո շրջն խառննան ի սուրբ խորհուրդն ի թվին հայոց .202. պատշաճաբար շարադրութեամբ յարմարեալ մեծի քարունապետին Մովկւսին. (Անդ, էջ 77թ—78ա):

բ.«Որդիք մարդկան, մինչև յե՞րը եք խառնախրոք, ընդէ՞ն սիրեք զնաբրութիւն և խնդրէք զատութիւն» ասէ որում յիշում բանին երանելին Դափիթ և ես զնորայն առ բերելով վերաճանեցից յիմուն ժամանակին... Սրբարև հովհիք մոլորեցան և ի պահութիւն հօտին Քրիստոսի միաբանեցան և սպանութիւն ոչ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգոյ:

Եւ արդ եղից յայս վայրի նասիրաց սեղան՝ ի հոգեւոր խորհիք զիրավից բանս սրբոյ դիտապետին Գրիգորի Վկայասիրի:

գ.—Գրիգորիոս Վկայասիրի Հայոց վերադիտողի վասն Զատկի. (Անդ. էջ 78ա—80ա):

բ.«Ի թուականութեան հայոց .ԸԼԱ. ի սուրբ Զատկէն մոլորեցան .ժա. ազգու հասատացելոց և հայք և ասորիք միայն մեացին հաստատուն.... Յայս հետէ ընթասցուր ի բանիցն ըննութիւն և տեսցուր որշափ է կարողութիւն ընդդիմադրելով զպատասխնին, ոչ հակառակութեամբ և յանդրգնութեամբ, այլ սրբոցն խօսեցեալ բանիցը հաստատելով զերին այսորիկ զճշմարտութիւն վասն պարզամտացն անսայշաք մնալով»:

դ.—(Քննութիւն բանիցն Գրիգորի կաթողիկոսի) (Վերագրումը մերն է—Ե. Ա. Պ). (Անդ, էջ 80ա—84թ):

բ.«Գրիգորն ասէ կաթողիկոսի.—Ի գրելոց թթվանութիւն գրոյս վեր երևի ոչ սրբոյ, զի չէր ոչ Տեառն, զի ամօթ համարէին ոչ վերադիտողի, զի եակերանաց ունեին կարծին և մի ոք զրանս անզգամույթեան համարեսցի ի սրբոց բանից յանձնմանի, զի սուս է և չէ ճշմարին և արին և ջուրն ի կողէն զոր ասէ ի սուրբ խորհուրդն դնենք աստ բանք, որով յայտնի ճշմարտութիւն և յանձնմանի ասութիւնն:

Իր այս կառուցվածքով սույն գործը մեզ հայտնի է միայն երկու ձեռագրերից. առաջինը Երևանի Մատենադարանի № 2268-ը է (էջ 74թ—84թ), երկրորդը՝ Զմիափի վանքի Մատենադարանի Անտոնյան հավաքածուի № 563-ը²⁰ (էջ 172թ—193ա):

²⁰ Տի՛ս Ցուցակ հայերն ձեռագրաց Զմիափի վանքի Մատենադարանին: Հատոր Բ: «Անտոնյան հաւաքածու»: Կազմեցին Հ. Ն. Ակիմյան և Հ. Հ. Ռոկյան: Վիեննա, 1971, էջ 168—178:

Բազմաթիվ ձեռագրերում հանդիպում ենք նաև թղթի բ մասին միայն (որից որոշ մասեր տպված են «Սլովն»-ում, 1866-ին), և միշտ «Յաղագ միասորութեան և բնորեան և դիմի և անձնասորութեան» անհայտ մի փոքրիկ դափանաքանական գործի ներ, իրեք մեկ ամբողջությունը²¹:

Միայն մեկ ձեռագրում²² «Սակ ջրոյն հաստանան...»-ի բ մասը չունի «Յաղագ միասորութեան...»-ի կցումը:

Իսկ որոշ ձեռագրերում հանդիպում ենք միայն «Յաղագ միասորութեան...» գործին²³:

Նորայր արք. Պողարյանն այս երկու հասովածները վերագրում է Եսայի Նշեցունը²⁴:

«Յաղագ միասորութեան...»-ի մասին մենք ոչինչ չենք կարող ասել, սակայն ինչ վերաբերում է առաջին հատվածին, ապա ակնհայտորեն դա Մովկւս Երգնկացու «Ընդդիմադրութիւն սակ ջրոյն խառնման...» թղթի բ մասն է:

* * *

Թղթի առաջին մասում Երգնկացին նախ մեջ է բերում Սահ ժողովի որոշումների թույլը:

Հայու այդ գրության, Սահ ժողովականներոյ որոշում են կայացրել հայ եկեղեցում ընդունելու և Հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու սովորությունը, հետևյալ վըկայություններով, ապացուցումներով և դատողություններով հաստատելով այն.

ա.«Հովհաննես Ավետարանին իր կաթողիկն Ս թղթի մեջ գրել է.

«Երեք են որ վկանեն յերկին՝ Հայր և Բանն և Հոգին, և երեք են որ վկանեն յերկին՝ Հոգին և ջուրն և արինն և երեքնան մի են»²⁵:

Հայու հոումեադավան վարդապետության, այսուղի հիշատակիված ջուրը և հաղորդության բաժակի համար է դրվել:

բ.—Պողոս առաքյալը Կորնեացվոց ուղղած Ս թղթի մեջ գրել է.

«Քանիցս անգամ թէ ուսիցեք զիաց

²¹ Տի՛ս Մատենադարանի №№ 2678 (120ա—122ա), 502 (110ա—115թ), 6302 (58թ—59թ) և այլ ձեռագրերը:

²² Տի՛ս Մատենադարանի № 581 (524ա—526թ) ձեռագրերը:

²³ Տի՛ս Մատենադարանի № 1980 (364թ—365ա) ձեռագիրը:

²⁴ Ն. Ե. Պողարյան, Հայ գրունք, Երևանում, 1971, էջ 366:

²⁵ Ս Յովի. Ե 8: Տի՛ս ձեռ. № 2268, էջ 74թ:

զայս և զբաժակս ընալիցէք, զման Տեառն պատմեցէք»²⁶:

Հսու հոռմեադավան վարդապետության, Քրիստոփի մահվան հիշատակը արյունն ու ջուրն է, որ եղալ երա կողից, մահվան ժամին:

Քրիստոս պատարագվեց խաչի վրա մարմնով և երա կողից արյունն ու ջուր հնուեց:

Հետևաբար պետք է ս. հաղորդության բաժակի մեջ ջուր խառնել:

Գ.—Քրիստոս վերցրեց բաժակը սեղանից, գոհացավ և ասեց. «Զայս արարէք առ իմոյ լիշտակի»²⁷:

Հսու հոռմեադավան վարդապետության, բաժակը ոչ թե ամսապական գինու անունն է, այլ ամանի, որի մեջ խառնվում է ջուրը և գինին:

Որի համար էլ աստվածային Սողոմոնը մարգարեացել է Քրիստոփի հաստատած հաղորդության խորհրդի վրա և ասել.

«Խառնեաց ի խառնելիս զգինի իր և պատրաստեաց զելան իր»²⁸:

Սողոմոնի այս մարգարեառությունը հայունիվում է խաչի վրա, երբ Քրիստոփի կողից արյունն ու ջուր է հոսում: Եվ այս ցոյց է տախու, որ չպետք է միայն ջրով կամ միայն գինով պատարագել, այլ գինով և ջրով միասին:

Եվ նեաց Բարուել Կեսարացու և Հակովի քառականությունու պատարագամաստուցնելիք մեջ գրված է, թե Քրիստոս. «առեալ բաժակ, օրինեաց, խառնեաց...»²⁹:

Դ.—Գինու և ջրի խառնումը Քրիստոփի աստվածության և մարդկության խառնումն է խորհրդանշում:

Երիոնյանք միայն ջրով էին պատարագում, որովհետև մերժում էին Քրիստոփի աստվածությունը և երան «մարդ սրբացակ» էին անվանում:

Ինկ մարկիոնյանք միայն գինով էին պատարագում, որովհետև մերժում էին Քրիստոփի մարդկանականությունը և երան միայն Աստված էին անվանում:

Քանի որ երանք աղանդավորներ էին, ապա երանց դավանանքները և ծեսները մերժելի են:

Եվ այս պատճառով Յ-րդ տիեզերական ժողովում և Ունիոն կայսրի ժամանակ գումարկած Կարթագենի ժողովում որոշվեց, որ պետք է պատարագել գինով և ջրով միասին, աղանդու որևէ պատարագ ընդունելի չի կարող լինել:

Է.—Գրիգոր Նյուացին ասում է, թե գինին ջուր է, թե «գինին ոչ այլ ինչ է բան եթէ ջուր որակացեալ ի խայտի՝ այսինքն զոյն առեալ լորթոյ»³⁰:

Այս թեորիայով թղթում փորձվում է անզոր դարձել Հովհան Ուկերերանի այն հայունի խոսքը, թե «ոչ արբից ի թերոյ որթոյ մինչև արբից զոյն նոր ըստ յարքայութեան Հօր իմոյ»³¹:

Վերոհիշյալ հետևույթյամբ թղթում ասվում է, թե Հովհան Ուկերերանը ընդրիմացել է ոչ թե երանց դեմ, ովքեր ջուր են խառնել գինուն, այլ երանց, ովքեր միայն ջրով են պատարագել:

Գ.—Միլանի Ամբրոսիոս եպիսկոպոսը ասել է, որ պետք է հնագանդվել Հոռոմի սուրբ և առաքելական եկեղեցուն, որովհետեւ այն հաստատված է Պետրոս առաքյալի ուղարկած հավատքի հիման վրա:

Եվ ինչպես որ մարմինը հնագանդվում է գլխին, նույնական և լնդիանուր եկեղեցին, որ Քրիստոփի մարմինը է, պարտավոր է հնագանդվել Հոռոմին, որովհետևն այն Քրիստոսի կողմից հաստատվել է իբրև գլուխ իր եկեղեցու:

Եվ քանի որ Հոռոմի Աթոռը անհրաժեշտ է գտնում բաժակի մեջ ջուր խառնելը, ապա և պետք է որ մյուս բոլոր եկեղեցիները նոյնը անեն:

Այնուհետև զախիս է Սփի ժողովականեների խոսքը. «....Վասն որոյ և ասս ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց և վարդապետաց, հարց և քահանայից, հանդերձ Քրիստոսակը թագաւորաւ մերով Լւսնի և պարան Հեթիմի և եղբարքը իրովք Աւշինի և Ալիխանին և այլ և իշխանօք, ազատօք և զօրօք և սրբազն ժողովրդականար լոյժ հասանութեամբ և պատուվ ընկալաք զիրաման սրբոյ Հօրու և իբրև զճշմարիս և զանաքելական կանոնն և զօրինադրութիւն հաստատեցար յեկեղեցին Հայոց... եմք համաձայն յամենայն բարեկարգութիւնն և տօսն եկեղեցւոյն Հովովմայ»³²:

Թե ինչ այլ բարեկարգությունները են ընդունել, թղթում հստակ տրված չեն, բացի երկու ակնարկությունից:

Ա.—Տերունական տոմերը արևմտյան եկեղեցու հետ միասին տոնել, մի սովորություն, որը «ի կանոնի ժամանակաց սկսեալ ի սրբոյ լուսատրչէն գոյր յեկեղեցին Հայոց և պահիր սոյն սովորութիւն բազում և երկար ամօք և ի պատճառէ ի Մերձ խափանեալ և բարձեալ եղլ»³³:

²⁶ Ա. Կորնթ. Ժ.Ա. 26: Անդ:

²⁷ Դուկաս ԽԲ. 19: Անդ:

²⁸ Ասուկ. Ա. 1—2: Անդ, էջ 75թ:

²⁹ Անդ, էջ 75ա:

³⁰ Անդ, էջ 75ա:

³¹ Անդ:

³² Անդ, էջ 76թ—77ա:

³³ Անդ, էջ 76թ:

թ. — Հաղորդության խորհրդի համար ցորենի հացի փոխարեն երբեք չօգտագործել գարեղեն հաց³⁴:

Թղթի վերջում դրված է հետևյալ եզրափակիչ խոսքը. «Եղև կանոնադրություն և սահման սրբոյ ժողովոյ ի մեծ թափառութեան Հայոց ԶԵՂ. և փոքր թվին Ե. յամսան մարտի ժթ. ի լողօգումնան տօնին, ի սուրբ մեծ կայութիկէն մայրաքաղաքին Սիստ»³⁵:

Սակայն ժողովի որոշումների թթյին կցված է մի փոքրիկ հատված Հռոմի Խնմովկենսոյն Բ. Պապի համակից՝ ուղված Ներսուն Ծնորհալու եղբայր հայոց Գրիգոր կաթողիկոսին:

Այլ հատվածում ասված է, որ պետք է բոլորին ուսուցանել, թե ինչպես Քրիստո պատարագվեց խաչի վրա մարմար և նրա կողից արյուն և ջուր հոսեց, և այս հիշատակը պետք է պահել և միշտ գործադրել:

Այնուհետև ասվում է, որ Քրիստոսի ծննդեղը պետք է տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ Հովհաննես Մկրտչի ծննդը՝ հունիսի 24-ին:

Մովսես Երգմկացին իր գրության մեջ հիշատակելով այս ամենը, ավելացնում է.

«Այսոքի հակառակասիրացն բանք»³⁶:

Այնուհետև Երգմկացին ակնարկում է լատինակեր կոսակցության կողմից արված հետևյալ քարեփիսություններին.

ա. — Ընդունել .ք. բնութիւն և .ք. կամք և .ք. ներգործութիւն:

բ. — Ապականացու կիրք ասել ի Քրիստոս:

գ. — Ընդունել զՔաղկեդովմի ժողովն:

դ. — Տոները կատարել ըստ Անավարզեցու խմբագրած Յայսմատրք-ի, որ է հայեկեղեցն հատուկ լոթեական դրության խախտումը:

ե. — Նզովել բոլոր այն սրբերին, որոնք չեն ճանաչված որպես սուրբ Հռոմի կողմից:

Երգմկացին այս փոքրիկ հատվածում մի քանի հետաքրքիր տեղեկություններ է տալիս մեզ, ըստ որի Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը իր այս բոլոր նորամուծությունները կատարել է Հեթումի պարտադրանքով.

«Զի իմ շահելով զկամս թագաւորին, զայս արարի և փոխանակ կրեմ յաբորումն լաթոռոյն»³⁷:

Երգմկացին վկայում է նաև, որ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը իր մահվան ժամին ասել է.

«Հայ եմ, հայ եմ և հայ մեռանիմ»³⁸:

Թղթի երկրորդ մասում Երգմկացին լսությունը խորքերով անդրադառնում է Սահմողությունի որոշումների ամսնության և անօտակարության հարցերին:

Երգմկացին պաշտպանում է այն տեսակետը, թե եթե ճշմարտության հաղթանակի համար են արվել այդ որոշումները, ապա անմողությունն է այրածն մոտածել, որովհետև «ամենայն ուժով յայտ է, զի որ ի ձայն մերձին նույն բայց է ճշմարիտ՝ քան որ ի բացեայ կայ և թէ պասպես է, որպէս և է իրաւացի, ապա որ ի ճախակարգեալ օրինադիր հայրան հույ էին և յաւանդիչուն հաստատութեան հաւատոյ նոցա յաէլու պարու և հատապալ, քան թէ սուտակասպասաց յետնոց...»³⁹: Եվ նա առաջարկում է, որ Սահմողությանները իրենց այդ որոշումները առաջարկեն Նիկիական Հավատամքի և առաջին սուրբ հայրերի սահմանադրությունների միման վրա:

Սակայն Երգմկացին հասկացել է այդ անցած-դարձած դեպքերի պատճառները.

«Եւ արդ լսեմ որպէս ասեն ստայօտ ու նայնաբանութիւն, զի սէր և միարանութիւն ասեն հաստատեսցի և գայցեն մակեդոնացի և օգնեսցեն մեզ»⁴⁰:

Երգմկացին կարողացել է ճշգրտությամբ հասկանալ իր ժամանակի քաղաքական կացությունը և հաստատել, որ «մակեդոնացի», այսինքն խաչակիրները, նպատակ ունեն միայն Երուսաղեմը ազատագրել անօրենների ձեռքից, և որպէսզի այս ամեն, նրանք պետք ունեն կիլիկյան հայկական թագավորության քարեկամության ու օգնությանը:

Եվ հենց այս պատճառով ավելորդ են հայերի զիշողությունները կրոնական-դպանաբանական գետնի վրա:

Իսկ եթե ոմանք կարծում են, թե սերը հայերի և խաչակիրների, կամ ավելի ճիշտ կինը ասել՝ Հռոմի միջն, ավելի շերմ և հաստատուն կիննի, եթե բոլորն ել նոյն դավանանքն ունենան, շարունակում է Երգմկացին, սիալկում են, որովհետև «մակեդոնացի» և «յոյնք» նոյն դավանանքը ունեն, սակայն նոյնինկ միմյանց քրիստոնյա չեն ճամարում, առելությունից դրդված:

³⁴ Անդ, էջ 77ս:

³⁵ Անդ:

³⁶ Անդ, էջ 77թ:

³⁷ Անդ:

Գ. մասում Երգմկացին խոսում է Գրիգոր

³⁸ Անդ:

³⁹ Անդ, էջ 78թ:

⁴⁰ Անդ, էջ 78ա:

Վկայաւեր կաթողիկոսի Զատկի ճանի գրության պատճառի մասին և ապա մեջբերում այդ ճանից մի հատված, միմնականում ցանկանալով պացուցել, որ չպետք է հավատալ Արևմուտքի եկեղեցիների կեղծ ուսումնաբերին և խոսումներին և չպետք է մոռանալ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու առաքելահաստատ դավանաբերն ու ավանդությունները:

* * *

Մեզ համար ամենակարևորը թղթի Դ. մասն է, այն է՝ Ա. մասի հականառությունը:

Երգնկացին նախադասություն առ նախադասություն մեջ է բերում Ա. հատվածը և հականառում լուրաքանչյուր հատվածին առանձին-առանձին:

Հականառվելիք հատվածների առջև դրված են լինում. «Գրիգորն ասէ կաթողիկոսի», «Իրցու», «Իրց. Գրիգոր կաթողիկոսէ», «Գրիր.» և այլն նման արտահայտություններ, իսկ Երգնկացու հատվածների առջև՝ «պիսի», «պիսի. Մովսիսի Վրդոտ.», «Մովս», «Մովսէսի» և այլն:

Ինչպես արդեն հանգամանորեն անդրադանք, Սահ ժողովականները ու հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու որոշումը ընդունել են՝ հիմնականում վեց թեգիսների հիման վրա:

Այսուհետեւ Երգնկացին նախ վերլուծում է այդ թեգիսները և պատասխանում հայ եկեղեցու վարդապետության ճշմարիտ հիմունքներով.

Ա.՝ «Երեք են որ վկայեն յերկին՝ Հայր և Բանն և Հոգին, և երեք են որ վկայ յերկրէ՝ Հոգին և ջուրն և արիննե»⁴¹:

Այս վկայությունը ոչ թե արվել է սուրբ խորհրդի ջրի մասին, այլ հայտնելու, թե Հիսուսը Սատուծ Որդին է:

Խաչի վրայի ջուրը մեր եկեղեցին ընդունում է որպես մկրտության խորհրդ, իսկ արյունը՝ հաղորդության խորհրդ:

Բ.՝ «Եթէ և զՊօղոսին թէ յուտել հացին զման Տեառն պատմել»⁴²:

Պողոս առաքյալը այնուեղ ջուր չի հիշում, այլ միայն բաժակի համար է ասում և կողից արյուն և ջուր ենելը կենդանի Սատվածության և մահացած մարմնով խաչի վրա Տիրոջն է քարոզում և ոչ սուրբ խորհրդի մեջ ջուր արկանելը:

Գ.՝ «Երեք և զքան Փրկչին, թէ առեալ զքածակն ասէ ոչ անապական գիւտյն է անոն, այլ ամանոյն»⁴³.

Բաժակը նաև հոմանուն է չարչարանքի նետ. «կարէթ ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ»⁴⁴:

Եվ Սողոմոնի խոսքերը ոչ թե ջրի և գիշեալ խառնման համար է ասված, այլ Հին և Նոր Կոտկարանների «միաբանութեան»:

Դ.՝ Այլ ասէ գտաք ի գիրս Երինոսի զանուան նոցա, զի Երիննեանքն ասէ լոկ մարդ ասեն զՔրիստոս վասն որոյ ջրով միայն պատարագէին և Մարկիննեանքն Աստուծ միայն ասէին և սակա այնոր գինով միայն պատարագէին⁴⁵.

Սա արդեն հայտնի ստություն է:

Նախ ոչ մի տեղ չի հիշված և ոչ մի սուրբ հայր չի ավանդել, որ Երիննյանք միայն ջրով էին պատարագում: Իսկ Երինոսի անունով հրանց բերած վկայությունը Երգնկացին չի ընդունում, այն պարզ պատճառով, որ Երգնկացու նման հմուտ մեկը, քննելով Երինոսի գործերը, չի գտնում այդ վկայությունը:

Եվ Երգնկացին իրավունք ունի մերժելու, քանի որ նա մեզ է հաղորդում չափազանց ուշագրավ մի պատմություն. «...Ես ինքնին եղէ ականատէս երբեմն, զի գրեալ էին ստայադ բանք և մակագրեալք զանունն Յովաննու և մատուցին առաջի իմ զի այնու պատրիեսցեն, որ և ի նոյն տեղուցն էակերցաւ, ոչ եղէ ընդունելի, զի սուտ էր»⁴⁶:

Սեփական փորձառությունից ելեկով Երգնկացին զարմանալի չի համարում որ Երինոսի գործերում իրեն չի հաջողվում գտնել վերոհիշյալ վկայությունը և ավելացնում է. «...Թէ յայլ Երինոս ունին բաց յաշակերտէ առաքելոցն, իրեանց աղանդովն, մեզ չէ ընդունելի»⁴⁷:

Այնուհետև Երգնկացին մեջ է բերում մի վկայություն Եպիփանից, Երիննացիների մասին, ըստ որի հրանք պաշտում են ջուրը որպես Սատված և մկրտվում «հանապա», իսկ ս. խորհրդի մասին ոչինչ չի գրված:

Գաղով Մարկիննի աղանդին, Երգնկացին ասում է.

Եթե միայն գինով պատարագելը հերձաված էր, առաջին սուրբ հայրերը միայն գինով չեն պատարագի և մեզ այդպես չեն ուսուցանած:

Իսկ եթե միայն գինով պատարագելը Մարկիննի աղանդի հերձաված է, ապա ինչո՞ւ հրանք, որոնք մեզ ուսուցանեցին, որ մինչև այժմ նըռվենք Մարկիննին, չասացին, թե գինով պատարագելը Մարկիննի աղանդին է հասուկ և սետք չէ անել:

⁴¹ Ա. Յով. Ե 8, ձև. էջ 80ր:

⁴² Ձև. էջ 80ր:

⁴³ Անդ:

⁴⁴ Անդ:

⁴⁵ Ձև. էջ 81ր:

⁴⁶ Ձև. էջ 82ա:

⁴⁷ Անդ:

Այլ Մարկիոնը մինք ներձված ունի և պատրազի խորհրդի գիմու կամ շրի մասին ոչ մի ներձված չի ընդունվել:

Խոկ ինչ վերաբերվում է Կարթագենի ժողովի որոշմանը, Ոնորիոս կայսեր ժամանակ, Երզնկացին նախ պարզում է, որ Ոնորիոսը եղել է Մեծ Թեոդոսի որդին, և նրանց նիստը ապրող շատ սրբեր, որոնց թվում և Հովհան Ուկերերանը, չեն ընդունել այդ որոշումը: Նշանակում է այդ ճշմարիտ չեւ մերժել:

Է.—Առնու և միւս բան զնիացոյն, զի գիմին ջուր ասէ որակացեալ ի փայտի⁴⁵.

Եթէ արդաւու է, որպես և է ճշմարիտ, ապա ջուրը ինչպե՞ս պեսը է ջուր մեջ խառնել:

Գ.—Հոռոմի գերազանության գաղափարը արժանի չի համարվել Երզնկացու կողմից հականառվելու:

Բացի այս հիմնական կետերի հականառությունից, Երզնկացին քննադատության է ենթարկում նաև բազմաթիվ այլ երկրորդական հարցեր և վկայություններ, որոնք տեղ են գտել Սահ ժողովականների թղթում և դրան կցված հավելվածում:

⁴⁵ Զետ. էջ 81ր:

Այնուհետև Երզնկացին սրտի ցավով քացականում է.

«Եւ արդ այս ամենայն արկածք սաստանայի են, զի պատառեաց զեկեղեցի և տակահին ևս պատառէ, զի մի միաբանելովն գլխոյ նորին գեր ի վերոյ գային, վասն որոյ աստեղութեամբ զմեզ առ իրեարս գոգուէ, և բաժանէ, զի դիրաս յաղթեացէ»⁴⁶:

Վերջում Երզնկացին քննության է առնում և ճշմարիտ մոտեցումով Սահ ժողովը համարում է հականառնական, անհեղինակավոր, անհմատ մի հավաքույթ, որին «ուստ ժողովոյն պարտ է ասել և ոչ սուրբ»:

Ահա այս է, ընդհանուր գծերի մեջ, Մովսեսն Երզնկացու «Ընդդիմադրութիւն Սակո ջրոյն խառնման...» դավանաբանական թույլթը:

Վերջացնելով, պեսը է կարևորությամբ շեշտել, որ այն իր տրամարանական շարադրանքով, գիտականությամբ և թարմությամբ կարևոր արժեք կարող է ներկայացնել նաև այսօր՝ միշեկեղեցական հարաբերությունների ժամանակ քննվող դավանաբանական հարցերի ուսումնասիրության կապակցությամբ:

⁴⁶ Զետ. էջ 83ր:

